ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության
ընդերքի վարչության ընդերքաբանական փորձաքննության բաժնի
փորձագետ Գոհար Քոչինյանի կողմից
11.06.2026-11.09.2026թթ. ժամանակահատվածի
ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ

1. Իրականացնում եմ «ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի «Արմենիուս-2» տեղամասում և «Արմենիուս» տեղամասի լեռնահատկացման սահմաններում 2025թ. կատարված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքների վերաբերյալ՝ 10.12.2025թ. դրությամբ պաշարների հաշվարկմամբ» հաշվետվության ընդերքաբանական փորձաքննությունը:

Փորձաքննության արդյունքները կքննարկվեն Ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովի առաջիկա նիստում:

2. Իրականացնում եմ ՀՀ Արմավիրի մարզի Արտամետի ավազակոպճային խառնուրդի հանքավայրում կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքների մասին՝ 01.01.2026թ. դրությամբ պաշարների հաշվարկմամբ» լրամշակված հաշվետվության ընդերքաբանական փորձաքննությունը:

3. Պատրաստել եմ «ՀՀ Սյունիքի մարզի Վերին Վարդանիձորի ոսկի-բազմամետաղային հանքավայրի Կենտրոնական տեղամասի վերագնահատում՝ կոնդիցիաների պարամետրերի տեխնիկատնտեսական հիմնավորմամբ և 01.01.2025թ. դրությամբ պաշարների հաշվարկմամբ» հաշվետվության մերժման հրամանը, քանի որ ներկայացված նյութերի արժանահավատությունը չի հավաստվել տեսչական մարմնի կողմից:

4. Ընթացքի մեջ է «Հաշվետվություն ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասում կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքների վերաբերյալ՝ 01.05.2026թ. դրությամբ պաշարների հաշվարկմամբ» հաշվետվության ընդերքաբանական փորձաքննությունը:

5. Մասնակցել եմ «ՀՀ Տավուշի մարզի Վազաշենի ոսկի-բազմամետաղային հանքավայրում իրականացված երկրաբանահետախուզական աշխատանքների մասին՝ կոնդիցիաների պարամետրերի տեխնիկատնտեսական հիմնավորմամբ և 01.07.2025թ. դրությամբ պաշարների հաշվարկմամբ» հաշվետվության ընդերքաբանական փորձաքննության գործընթացին: Աշխատանքը վերադարձվել է լրամշակման՝ դրանում տեղ գտած թերությունների վերացման նպատակով:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
ընդերքի վարչության ընդերքաբանական
փորձաքննության բաժնի փորձագետ Գոհար Քոչինյան